ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (09.09.2013-05.12.2013) ԵՎ 10.12.2013-ԻՆ ԵՎ 20.12.2013-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման չորրորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 5 չորսօրյա և մեկ արտահերթ նիստ, և երկու արտահերթ նստաշրջան՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 91 հարց, որից 63-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 23-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների, իսկ 5-ը պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր էին, որոնցից 1-ը՝ միջազգային պայմանագրերի վավերացման մասին հարցը՝ որպես ենթահարց ընդգրկում էր 22 միջազգային համաձայնագիր:

Հետագայում նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 52 հարցով, այդ թվում՝ 28 ՀՀ կառավարության նախաձեռնություն, 17 ՀՀ ԱԺ պատգամավորական նախաձեռնություն և 7 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր: Օրակարգը լրացվել է նաև 14 միջազգային պայմանագրով:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 178 հարցերից (ներառյալ միջազգային պայամանագրերը) 131-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից աշնանային նստաշրջանի և դրանից հետո գումարված արտահերթ նստաշրջանների ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 40-ը (28-ը ՀՀ կառավարության (8-ը կառավարության որոշմամբ՝ անհետաձգելի), իսկ 12-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների նախաձեռնած նախագծեր էին): Միջազգային պայմանագրերից զատ քննարկվել է 5 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարց: Ամբողջությամբ ընդունված 40 օրենքներից կամ օրենքի

փաթեթներից 5-ը մայր օրենքներ են, որոնք բոլորն էլ կառավարության նախաձեռնություններ էին:

Նստաշրջանի ընթացքում ՝

- ԱԺ-ը ձևավորեց ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով՝ 112 կողմ, 1 դեմ, 2 ձեռնպահ ձայներով:
- Փակ գաղտնի քվեարկությամբ Գագիկ Ղազինյանն ընտրվեց Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի իրավաբան-գիտնական անդամ:
- Փակ գաղտնի քվեարկությամբ Գրիգոր Բադիրյան ընտրվեց Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի իրավաբան-գիտնական անդամ:
- Փակ գաղտնի քվեարկությամբ Գևորգ Կոստայանն ընտրվեց Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ:
- «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ռուբեն Հակոբյանի հրաժարականից հետո խմբակցության նոր ղեկավար ընտրվեց Զարուհի Փոստանջյանը:
- Փակ գաղտնի քվեարկության արդյունքում Իշխան Զաքարյանը նշանակվեց Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահ:
- Պատգամավոր Խաչիկ Հարությունյանի լիազորությունները դադարեցվեցին՝ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ:
- Գումարվեց արտահերթ նիստ, որի ընթացքում շարունակվեց «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» հարցի քննարկումը, որը ընդմիջվեց «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

- Քննարկվեց՝
  - Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2012 թվականի գործունեության մասին հաղորդումը,
  - «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման, ընտրական օրենսգրքի խախտումների, առաջարկվող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձանաժողովի հաղորդագրությունը,

- Հանրային հեռուստառադիոընկերության 2012 թվականի գործունեության վերաբերյալ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հաղորդումը,
- քննարկվեց «Օրինաց երկիր» խմբակցության հարցապնդումը,
- ՀԱԿ խմբակցության հարցապնդումը:

- Քննարկվեց և ընդունվեց՝
  - «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը,
  - Հայաստանի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի առաջարկությունը,
  - Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2014 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:

Նստաշրջանների ընթացքում վավերացվեց 18 միջազգային պայմանագիր, այդ թվում՝ պաշտպանության և սեյսմիկ պաշտպանության ոլորտում միջպետական համագործակցության վերաբերյալ, Եվրոպական միության ծրագրերին Հայաստանի Հանրապետության մասնակցության ընդհանուր սկզբունքների վերաբերյալ, ԵՄ վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին, ինչպես նաև տրանսպորտային, ջրամատակարարման ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված վարկային և այլ համաձայնագրեր:

ՀՀ Ազգային ժողովը քվեարկությամբ մերժեց ՀՀ ԱԺ պատգամավորներ Արծվիկ Մինասյանի, Արմեն Ռուստամյանի, Լևոն Զուրաբյանի, Զարուհի Փոստանջ-յանի, Նաիրա Զոհրաբյանի՝ հեղինակների կողմից արտահերթ համարված «Կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչը գործադրելու հարցի վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարության նախագիծը, ինչպես նաև ՀՀ ԱԺ պատգամավոր Զարուհի

Փոստանջյանի՝ դարձյալ արտահերթ համարված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 11 գրավոր և 66 բանավոր հարցով: «ՀԱԿ» և «Օրինաց երկիր» խմբակցությունները մեկական հարցապնդմամբ դիմել են ՀՀ կառավարությանը, որոնք քննարկվել են համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 105.1 հոդվածի:

Հնչել է 100 պատգամավորական հայտարարություն, որոնցից 26-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը:

Դեկտեմբերի 10-ին գումարված արտահերթ նստաշրջանի ընթացքում ամբողջությամբ ընդունվել են սոցիալական ուղղվածության մի շարք ՀՀ կառավարության նախաձեռնություններ: Այսպես՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի և կից նախագծերի փաթեթը ապահովում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության միասնական համակարգի ներդրում, պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության չափերի հիմնավորված տարբերակում, պետական ծառայության տարբեր ոլորտներում աշխատավարձերի սանդղակների համադրելիության ապահովում: Կանոնակարգում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության սկզբունքները, նրանց հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի, պարգևատրման, դրամական օգնության կազմակերպման և վարձատրության հետ կապված այլ հարաբերություններ: Փաթեթի ընդունմամբ՝ 2014 թվականի հուլիսին նշված անձանց աշխատավարձերը կբարձրանան միջինում 40%-ով:

2014 թվականի հունվարին 20-40%-ով կաճի նաև միչև 10 տարվա աշխատանքային ստաժ ունեցող կենսաթոշակառուների կենսաթոշակը: «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքով փոխվում է կենսաթոշակի չափը հաշվարկելու բանաձևը, այն համահունչ է դառնում կենսաթոշակային ապահովության ոլորտում վարվող քաղաքականության նպատակադրումներին՝ նպաստելով կենսաթոշակառուների շրջանում աղքատության նվազեցմանը:

Բանաձևի փոփոխության արդյունքում 2014 թվականին աշխատանքային կենսաթոշակի չափը՝

1) չի աճի շուրջ 943 կենսաթոշակառուի համար (0,84 տոկոս), որոնք ունեն 68 տարուց ավելի աշխատանքային ստաժ (քանի որ նոր բանաձևով հաշվարկված՝ կենսաթոշակի չափը ավելի ցածր է, ուստի այդ անձանց կվճարվի նախկին չափով՝ 70000 դրամ և ավելի),
2) կաճի մինչև 3 տոկոսով՝ շուրջ 1109 կենսաթոշակառուի համար (0,25 տոկոս),
3) կաճի 3-5 տոկոսով՝ շուրջ 3808 կենսաթոշակառուի համար (0,86 տոկոս),
4) կաճի 5-10 տոկոսով՝ շուրջ 52464 կենսաթոշակառուի համար (11,82 տոկոս),
5) կաճի 10-15 տոկոսով՝ շուրջ 93066 կենսաթոշակառուի համար (20,97 տոկոս),
6) կաճի 15-20 տոկոսով՝ շուրջ 180502 կենսաթոշակառուի համար (40,67 տոկոս),
7) կաճի 20-ից ավելի տոկոսով՝ շուրջ 111914 կենսաթոշակառուի համար (25,22 տոկոս):

Բանաձևի փոփոխության արդյունքում կենսաթոշակի չափի աճը կկազմի՝

10 տարվա աշխատանքային ստաժ ունեցող կենսաթոշակառուի համար՝ 23 %,
20 տարվա աշխատանքային ստաժ ունեցող կենսաթոշակառուի համար՝ 23,8 %,
30 տարվա աշխատանքային ստաժ ունեցող կենսաթոշակառուի համար՝ 19,6 %,
40 տարվա աշխատանքային ստաժ ունեցող կենսաթոշակառուի համար՝ 14.3 %,
50 տարվա աշխատանքային ստաժ ունեցող կենսաթոշակառուի համար՝ 6.7 %,
60 տարվա աշխատանքային ստաժ ունեցող կենսաթոշակառուի համար՝ 3,6 %:

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում մեկ այլ փոփոխությամբ՝ 2014 թվականի հուլիսից զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը հնարավորինս կնույնականացվի

քաղաքացիական անձանց կենսաթոշակը հաշվարկելու համար սահմանված կարգին: Կապահովվի զինվորական միջին կենսաթոշակի չափի աճ շուրջ 15 տոկոսով:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրությամբ սահմանվել են պետական նպաստների նոր տեսակներ՝ դրանք համապատասխանեցնելով սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի պահանջներին: Պետական նպաստների նշանակման և վճարման կազմակերպման գործառույթները վերապահվել են մեկ միասնական պետական մարմնին՝ ապահովելով մեկ պատուհանի սկզբունքի կիրառում: Սահմանվել է երրորդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում տրվող երեխայի ծննդյան միանվագ նպաստի՝ պետական աջակցության հաշվին փոխանցած միջոցներից ձևավորվող ընտանեկան դրամագլխի գաղափարը: